# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿԻ

# ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ագարակ համայնք ՀՀ, Լոռու մարզ, գ.Ագարակ, 61244, agarakgp@mail.ru

06.03.2017թ.

065/25 ՀՀ Լոռու մարզպետ, պարոն՝Ա.Նալբանդյանին

կից Ձեզ է ներկայացվում Ագարակ համայնքի ավագանու՝«24» փետրվարի 2017թվականի թիվ 2-Ն,3-Ն, 4 որոշումները:

Համայնքի ղեկավար՝ Ռ.Բարխուդարյան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Նորաշեն համայնք, գ. Նորաշեն, հեռ.093475448
էլ. փոստ՝ norashen.lori@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

«24» ՓԵՏՐՎԱՐԻ 2017 թ. N 2 -Ն

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 18-րդ կետով, «Տեղական տուրքերի և վճարների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ հոդվածներով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով, 72-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի գ) ենթակետով՝

Ագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. Սահմանել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ագարակ գյուղական համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների տեսակները, դրույքաչափերը՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
3. Ուժը կորցրած ճանաչել Ագարակ համայնքի ավագանու 2016 թվականի դեկտեմբերի 1-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Ագարակ գյուղական համայնքում 2017 թվականի համար տեղական տուրքերի և վճարների դրույքաչափերը սահմանելու մասին» N 37-Ն որոշումը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| *Համայնքի ավագանու անդամներ* | *կողմ* | *դեմ* | *ձեռնպահ* |
|---|---|---|---|
| Ալիխանյան Արթուր | | | |
| Բարխուդարյան Ռադիկ | | | |
| Մելիքջանյան Ռուդիկ | | | |
| Չատինյան Կարեն | | | |
| Չոբանյան Արթուր | | | |

Համայնքի ղեկավար՝ Ա. Բարխուդարյան

գ.Ագարակ

24.02.2017թ.

Հավելված՝
Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ագարակ համայնքի ավագանու
2017 թվականի փետրվարի 24-ի թիվ 2 -Ն որոշման

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՎՃԱՐՆԵՐԻ ՏԵՍԱԿՆԵՐԸ, ԴՐՈՒՅՔԱՉԱՓԵՐԸ

### ՏԵՂԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

1) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում նոր շենքերի, շինությունների և ոչ հիմնական շինությունների շինարարության (տեղադրման) (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջող դեպքերի) թույլտվության համար.

ա. հիմնական շենքերի և շինությունների համար՝

մինչև 300 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող անհատական բնակելի, այդ թվում՝ այգեգործական (ամառանոցային) տների, ինչպես նաև մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հասարակական և արտադրական նշանակության շենքերի և շինությունների համար՝ **տասնհինգ հազար դրամ**

բ. սույն կետի «ա» ենթակետով չնախատեսված շենքերի և շինությունների համար՝

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երեսուն հազար դրամ**
- 500-ից մինչև 1000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **քսանհինգ հազար դրամ**
- 1000-ից մինչև 3000 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երեսուն հազար դրամ**
- 3000-ից և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հիսուն հազար դրամ.**

գ. ոչ հիմնական շենքերի և շինությունների համար՝

- մինչև 20 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **երեք հազար դրամ,**
- 20 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող շենքերի և շինությունների համար՝ **հինգ հազար դրամ,**

2) համայնքի վարչական տարածքում գոյություն ունեցող շենքերի և շինությունների վերակառուցման, վերականգնման, ուժեղացման, արդիականացման և բարեկարգման աշխատանքների (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված շինարարության թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար, եթե սահմանված կարգով հաստատված ճարտարապետաշինարարական նախագծով՝

ա. չի նախատեսվում կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ**

բ. բացի շենքերի և շինությունների վերակառուցման, ուժեղացման, վերականգնման կամ արդիականացման աշխատանքներից, նախատեսվում է նաև կցակառույցների, վերնակառույցների, շենքի տրամաչափային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) հետևանքով օբյեկտի

ընդհանուր մակերեսի ավելացում կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, և, բացի սույն կետի «ա» ենթակետով սահմանված դրույքաչափից, կիրառվում են նաև նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը՝ շենքերի և շինությունների ընդհանուր մակերեսի ավելացման կամ շենքերի գործառական նշանակության փոփոխության մասով,

գ. նախատեսվում է միայն կցակառույցների, վերնակառույցների, շենքի գաբարիտային չափերն ընդլայնող այլ կառույցների (այդ թվում՝ ստորգետնյա) շինարարություն կամ շենքերի գործառական նշանակության փոփոխություն, ապա, սույն օրենքի իմաստով, այն համարվում է նոր շինարարություն, որի նկատմամբ կիրառվում են նոր շինարարության համար սույն հավելվածի 1-ին մասի 1-ին կետով սահմանված նորմերը և դրույքաչափերը.

3) համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների և քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման (բացառությամբ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված քանդման թույլտվություն չպահանջվող դեպքերի) թույլտվության համար՝ **հինգ հազար դրամ**

4) համայնքի վարչական տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **վաթսուն հազար դրամ**

5) համայնքի վարչական տարածքում գտնվող խանութներում և կրպակներում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի, մանրածախ առևտրի կետերում կամ ավտոմեքենաների տեխնիկական սպասարկման և նորոգման ծառայության օբյեկտներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **տասնութ հազար դրամ**

6) համայնքի վարչական տարածքում թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի որոշակի վայրում մանրածախ առք ու վաճառք իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար տասնհինգ հազար դրամ

7) համայնքի վարչական տարածքում ոգելից և ալկոհոլային խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝

ա. ոգելից և ալկոհոլային խմիչքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ,**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **երեք հազար մեկ դրամ**
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **հինգ հազար դրամ**
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **յոթ հազար դրամ**
- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տաս հազար դրամ**
- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ քսան հազար դրամ

բ. ծխախոտի արտադրանքի վաճառքի թույլտվության համար՝ յուրաքանչյուր եռամսյակի համար՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **մեկ հազար հինգ հարյուր դրամ**
- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ երեք հազար մեկ դրամ
- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **չորս հազար դրամ**
- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **վեց հազար մեկ դրամ**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **յոթ հազար հինգ հարյուր մեկ դրամ**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հիմնական և ոչ հիմնական շինությունների ներսում վաճառքի կազմակերպման դեպքում՝ **տասերեք հազար հինգ հարյուր մեկ դրամ**

8) իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին համայնքի վարչական տարածքում «Առևտրի և ծառայությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ բացօթյա առևտրի կազմակերպման թույլտվության համար՝ յուրաքանչյուր օրվա համար՝ **մեկ հարյուր հինգ դրամ**

9) համայնքի վարչական տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտներին, խաղատներին և բաղնիքներին (սաունաներին) ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. առևտրի օբյեկտների համար՝ հինգ հազար դրամ

բ. հանրային սննդի և զվարճանքի օբյեկտների համար՝ **հինգ հազար**

գ. բաղնիքների (սաունաների) համար՝ **քառասուն հազար դրամ**

դ. խաղատների համար՝ **հարյուր հազար դրամ**

ե. շահումով խաղերի համար՝ **հիսուն հազար դրամ**

զ. վիճակախաղերի համար՝քսան հազար դրամ

10) համայնքի վարչական տարածքում, համայնքային կանոններին համապատասխան, հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար տեղական տուրքը յուրաքանչյուր եռամսյակի համար սահմանվում է՝

ա. հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ մեկ հազար դրամ

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **հազար հինգ հարյուր մեկ դրամ**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ երեք հազար մեկ դրամ

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ հինգ հազար դրամ

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **վեց հազար մեկ դրամ**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **տաս հազար դրամ**

բ. ոչ հիմնական շինությունների ներսում՝

- մինչև 26 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երեք հարյուր դրամ**

- 26-ից մինչև 50 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **վեց հարյուր դրամ**

- 50-ից մինչև 100 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **մեկ հազար դրամ**

- 100-ից մինչև 200 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **երկու հազար դրամ**

- 200-ից մինչև 500 քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **չորս հազար դրամ**

- 500 և ավելի քառակուսի մետր ընդհանուր մակերես ունեցող հանրային սննդի օբյեկտի համար՝ **յոթ հազար հինգ հարյուր դրամ**

11) ավագանու սահմանած կարգին ու պայմաններին համապատասխան՝ համայնքի վարչական տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար, բացառությամբ միջպետական ու հանրապետական նշանակության ավտոմոբիլային ճանապարհների օտարման շերտերում և պաշտպանական գոտիներում տեղադրվող գովազդների թույլտվությունների, յուրաքանչյուր ամիս մեկ քառակուսի մետրի համար՝

ա. ալկոհոլային սպիրտի պարունակությունը մինչև 20 ծավալային տոկոս արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **մեկ հազար դրամ**

բ. թունդ ալկոհոլային (սպիրտի պարունակությունը 20 և ավելի ծավալային տոկոս) արտադրանք գովազդող արտաքին գովազդի համար՝ **հազար հինգ հարյուր դրամ**

գ. սոցիալական գովազդի համար՝ զրո դրամ,

դ. այլ արտաքին գովազդի համար՝ **յոթ հարյուր հիսուն դրամ**

ե. դատարկ գովազդային վահանակների համար՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 25 %-ի չափով,

զ. եթե արտաքին գովազդ տարածող գովազդակիրը տեղաբաշխել և տարածել է իր կազմակերպության գովազդը՝ համայնքի վարչական տարածքում այլ արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար սահմանված տուրքի 10 %-ի չափով.

14) Հայաստանի Հանրապետության համայնքների խորհրդանիշերը (զինանշան, անվանում և այլն), որպես օրենքով գրանցված ապրանքային նշան, ապրանքների արտադրության, աշխատանքների կատարման, ծառայությունների մատուցման գործընթացներում օգտագործելու թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ հիսուն հազար դրամ

15) համայնքի վարչական տարածքում մարդատար-տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների՝ միկրոավտոբուսների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար՝ օրացուցային տարում յուրաքանչյուր մեքենայի համար՝ **հինգ հազար դրամ**

16) համայնքի վարչական տարածքում քաղաքացիական հոգեհանգստի (հրաժեշտի) ծիսակատարության ծառայությունների իրականացման և (կամ) մատուցման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝ **հարյուր հազար դրամ**

17) համայնքի վարչական տարածքում մասնավոր գերեզմանատան կազմակերպման և շահագործման թույլտվության համար՝ օրացուցային տարվա համար՝

ա. 3 հա-ից մինչև 5 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **հինգ հարյուր հազար դրամ**

բ. 5 հա-ից մինչև 7 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **երկու միլիոն դրամ**

գ. 7 հա-ից մինչև 10 հա մակերես ունեցող գերեզմանատների համար՝ **երեք միլիոն հինգ հարյուր հազար դրամ**

դ. 10 հա-ից ավել մակերես ունեցող գերեզմանատների համար՝ հինգ միլիոն դրամ:

## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐ

1) համայնքի տարածքում շենքի կամ շինության արտաքին տեսքը փոփոխող վերակառուցման աշխատանքներ կատարելու հետ կապված տեխնիկատնտեսական պայմաններ մշակելու և հաստատելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար երկու հազար դրամ

2) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված շինարարության թույլտվություն պահանջող, բոլոր շինարարական աշխատանքներն իրականացնելուց հետո շենքերի և

շինությունների (այդ թվում՝ դրանց վերակառուցումը, վերականգնումը, ուժեղացումը, արդիականացումը, ընդլայնումն ու բարեկարգումը) կառուցման ավարտը ավարտական ակտով փաստագրման ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. մեկ հազար դրամ

3) ճարտարապետաշինարարական նախագծային փաստաթղթերով նախատեսված աշխատանքներն ավարտելուց հետո շահագործման թույլտվության ձևակերպման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. հինգ հազար դրամ

4) համայնքի տնօրինության և օգտագործման ներքո գտնվող հողերը հատկացնելու, հետ վերցնելու և վարձակալության տրամադրելու դեպքերում փաստաթղթերի (փաթեթի) նախապատրաստման համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. երկու հազար դրամ

5) համայնքի կողմից կազմակերպվող մրցույթների և աճուրդների մասնակցության համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. հինգ հազար դրամ

6) համայնքի վարչական տարածքում տոնավաճառներին (վերնիսաժներին) մասնակցելու համար՝ համայնքի մատուցած ծառայությունների դիմաց փոխհատուցման վճար. երեք հազար դրամ

7) համայնքի կողմից աղբահանության վճար վճարողների համար աղբահանության աշխատանքները կազմակերպելու համար աղբահանության վճարը սահմանել՝

ա. կենցաղային աղբի համար՝ համայնքում անձնագրային հաշվառման կանոններով ըստ հասցեի հաշվառում ունեցող և (կամ) բնակվող յուրաքանչյուր բնակչի համար՝ առավելագույնը ամսական100 դրամ

բ. ոչ կենցաղային և խոշոր եզրաչափի աղբի համար՝

ըստ ծավալի՝ մեկ խորանարդ մետր աղբի համար՝ առավելագույնը 1500դրամ

8) համայնքի կողմից իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի հավաքման և փոխադրման, ինչպես նաև աղբահանության վճար վճարողներին շինարարական և խոշոր եզրաչափի աղբի ինքնուրույն հավաքման և փոխադրման թույլտվության համար աղբահանության վճարը սահմանել 7-րդ կետով սահմանված վճարի 20% չափով.

9) համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ տրամադրելու համար՝ մեկ փաստաթղթի համար՝ **հինգ հարյուր դրամ** փոխհատուցման վճար:

Աշխատակազմի քարտուղար՝ Գեղանուշ Դանիելյան

(անուն,ազգանուն)

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔ

## ՈՐՈՇՈՒՄ

« 24 » փետրվարի 2017 թվականի թիվ 3 -Ն

## ԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով, 82-րդ հոդվածի 7-րդ մասով, «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 56-րդ հոդվածի 2-րդ մասով ՝

Ագարակ համայնքի ավագանին որոշում է.

1. ՀաստատելԱգարակ _համայնքի 2016 թվականի բյուջեի կատարման տարեկան հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի :
2. Հաստատել 2016 թվականի Ագարակ համայնքի զարգացման ծրագրի իրականացման վերաբերյալ հաշվետվությունը՝ համաձայն հավելվածի:
3. Սույն որոշումը օրենքով սահմանված կարգով ներկայացնել Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն պետական իրավական փորձաքննություն անցկացնելու համար:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

| Համայնքի ավագանու անդամներ | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|
| Արթուր Ալիխանյան | | | |
| Ռադիկ Բարխուդարյան | | | |
| Արթուր Զորանյան | | | |
| Ռուդիկ Մելիքջանյան | | | |
| Կարեն Զատինյան | | | |

Համայնքի ղեկավար՝ _____ Ռ.Բարխուդարյան / /

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

# ԼՈՌՈՒ ՄԱՐԶ

# ԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔ

# ԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2016ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՏԱՐԵԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ռ. ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է '24.02.2017ԹՎԱԿԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ

ԹԻՎ'3-Ն ՈՐՈՇՄԱՄԲ

24 ՓԵՏՐՎԱՐԻ 2017Թ.

գ.ԱԳԱՐԱԿ

արգելի համագյուղացիներ,սիրով ողջունում եմ Ձեզ,քանզի բոլորդ շահագրգռված են համայնքի զարգացմսն հեռանկարով, նրա տեսլականով:

Բոլորիս նպատակն է տարեցտարի համայնքը ավելի բարեկեցիկ դարձնել,բարձրացնել բնակչության կենսամակարդակը,նպատակ հետապնդելով հետևողականորեն բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով աստիճանաբար լուծել առկա հիմնախնդիրները և բարելավել բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

Համայնքում առկա գերակա հիմնախնդիրները շատ են,դրանց իրականացման համար ժամանակ և ֆինանսական միջոցներ են հարկավոր:2013-2016թթ. համայնքի զարգացման քառամյա ծրագրով նախատեսված ծրագրերից համայնքում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Վերանորոգվել է խմելու ջրի ներքին ցանցից մի հատված: Վերանորոգվել են նաև ներհամայնքային ճանապարհները:Դպրոցի համար սպորտդահլիճը և համայնքի մշակույթի տունը ,որոնք ևս ընդգրկված են համայնքի զարգացման քառամյա ծրագրում, չեն իրականացվել՝ֆինանսական միջոցների բացակայության պատճառով;Այդ հիմնախնդիրները ընդգրկված են համայնքի զարգացման 2017-2021թթ ծրագրում՝ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, հասարակական կազմակերպությունների և այլ կազմակերպությունների և բարերարների աջակցությունը :

## ՀԱՄԱՅՆՔԻ ԻՐԱՎԻՃԱԿԻՆ ԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Ագարակ գյուղը գտնվում է Լոռու մարզի Ստեփանավանի տարածաշրջանում՝մարզկենտրոնից 40 կմ հեռավորության վրա,ծովի մակերևույթից 1380մ բարձրության վրա:Կլիման բարեխառն լեռնային է:Այն հիմնադրվել է 1812 թվականին:

Համայնքն ունի միջնակարգ դպրոց, նախակրթարան,մանկապարտեզ,բուժկետ :

Համայնքի վարչական տարածքը՝1931 հա, առկա բնակչության թվաքանակը կազմում է՝1351մարդ, ,մշտական բնակչության թվաքանակը՝ 1272 մարդ է :տնտեսությունների թիվը ՝ 401:

Համայնքն իր վարչական սահմաններով սահմանակից է Յաղդան, Լեջան համայնքներին:

Համայնքը գտնվում է Ստեփանավան քաղաքից 8, մարզկենտրոն Վանաձորից 42 կմ հեռավորության վրա:

տարի հաստատվում է կայուն ձնածածկույթ:Ամառները տաք են, համեմատաբար ոնավ:Տարեկան թափվում են 600-700 մմ մթնոլորտային տեղումներ:

Գյուղում գործում է 19-րդ դարում կառուցված եկեղեցի:

## Ժ Ո Ղ Ո Վ Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Համայնքի առկա բնակչության տարիքային և սոցիալական կազմի ցուցանիշները

(01.01.2017 թ. դրությամբ)

| Հ/հ | ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԸ | ՀԱՄԱՅՆՔ | |
|---|---|---|---|
| 1. | Առկա բնակչության թիվը, այդ թվում՝ | 1351 | |
| | Տղամարդիկ | 681 | |
| | Կանայք | 670 | |
| | 0-ից 4 տարեկան | 62 | |
| | 5-7 տարեկան | 34 | |
| | 8-14 տարեկան | 85 | |
| | 15- 17 տաեկան | 41 | |
| | 18-62 տարեկան | 938 | |
| | 63 և ավելի | 191 | |
| | փախստականներ | 1 | |
| | կենսաթոշակառուներ | 240 | |
| | միակողմանի ծնողազուրկ երեխաներ | | |
| | երկկողմանի ծնողազուրկ | ------- | |
| | | | |

| | | | |
|---|---|---|---|
| | Հաշմանդամներ | 70 | |
| | որից՝ | | |
| | մանկուց հաշմանդամներ | 5 | |
| | Զբաղվածներ | 713 | |
| | նպաստառու ընտանիքների թիվը | 30 | |
| | Արտագնա աշխատանքի մեկնող տնային տնտեսությունների թիվը | 141 | |
| | | | |

## Զ Բ Ա Ղ Վ Ա Ծ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Համայնքի զբաղված բնակչության թվաքանակը մոտ 713 է, որից 640 ընդգրկված են գյուղգործունեության մեջ:Ոչ գյուղատնտեսական ոլորտում ընդգրկված են 73 մարդ:Մասնավորապես, պետական մարմիններում ընդգրկված են 73 մարդ:Համայնքի աշխատակազմում զբաղված է 9 աշխատող՝3 համայնքային ծառայող, 6 հայեցողական պաշտոն զբաղեցնող: Բանակում պարտադիր զինվորական ծառայություն են իրականացնում 20 երիտասարդներ:Պայմանագրային զինծառայություն են իրականացնում 9 երիտասարդ:

Համայնքում չեն գործում սոցիալական ծառայություններ, նոտարական գրասենյակ,ՋԱԳՍ-իբյուրո, աղետների ռիսկերի նվազեցման համակարգող մարմին և այլ կառույցներ:Թվարկված ծառայությունները հասանելի են համայնքից 8 կմ հեռավորության վրա գտնվող տարածաշրջանային կենտրոնում:

Համայնքում գործում է միջնակարգ դպրոց,

աշակերտների թիվը՝132

ուսուցիչների թիվը՝23

աշխատողների թիվը՝11:

ոցը համալրված է բարձրագույն կրթությամբ որակյալ մասնագետներով, բոլորը տեղացի:

պրոցը հիմնանորոգված է:

Համայնքում գործում է նախակրթարան՝11 սանով :

տիպային մանկապարտեզ, որտեղ հաճախում են 23 երեխա:

համայնքում գործում է բուժկետ,որն ապահովված է որակյալ մասնագետներով, :Բուժկետը ժամանակակից տեխնիկական միջոցների հագեցվածության խիստ կարիք ունի:

Ընտանեկան նպաստի համակարգում ընդգրկված են 37 ընտանիքներ:

Համայնքի տարածքում առկա են հետևյալ արդյունաբերական ձեռնարկությունները՝քարի արդյունահանում՝ 1հատ,ՀԷԿ :

Համայնքի տարածքում գործում են առևտրի և հանրային սննդի 6 կետ:

Համայնքը համարվում է գյուղատնտեսական:

## ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

## ՀԱՄԱՅՆՔԻ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ

| | Համայնքի մարզի Ագարակ համայնքի հողային ռեսուրսները | հա |
|---|---|---|
| 1. | ՀՀ Լոռու մարզի Ագարակ համայնքի վարչական սահմաններում ընդգրկված հողերի ընդհանուր մակերեսը,որից՝ | 2702,21 |
| 2. | Բնակելի շինությունների տակի հողեր | 93,56 |
| 3. | Գյուղատնտեսական նշանակության հողեր | 2234,39 |
| 4. | Արդյունաբերական արտադրական շինությունների տակի հողեր | 19,36 |
| 5. | Ընդերքօգտագործման հողեր | 2,0 |
| 6. | ճանապարհների տակի հողեր | 3,36 |
| 7. | Էներգետիկայի, կապի,տրանսպորտի, կոմունալ ենթակառուցվածքների հողեր | 17,27 |
| 8. | առողջապահական,հանգստավայրերի,մարզական ու պատմամշակութային հողեր՝ | 3,47 |
| 9 | Հատուկ պահպանվող տարածքներ | 3,7 |
| | | |

| | | |
|---|---|---|
| | Անտառային ֆոնդի հողեր | 304,94 |
| 12 | համայնքային այլ հողեր | 30,89 |

Արտադրող հիմնական գյուղատնտեսական մթերքներն են՝կարտոֆիլ, ցորեն, բանջաբոստանային կուլտուրաներ

ՀՈՂԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆ

| Անվանում | Հեկտար | Արտադրանքի ցենտներ | Իրացման շուկա |
|---|---|---|---|
| կարտոֆիլ | 85 | 17000 | ՀՀ շուկա |
| ցորեն | 180 | 7200 | |

ԱՆԱՍՆԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ

01.01.2017թ. դրությամբ

| Անասունների տեսակը | գլխաքանակը |
|---|---|
| խոշոր եղջերավոր անասուններ | 915 |
| այդ թվում՝ կովեր | 356 |
| մանր եղջերավոր անասուններ | 496 |
| խոզեր | 165 |
| թռչուններ | 2868 |
| մեղվաընտանիքներ | 576 |
| ձիեր | 46 |

ֆտադրվող հիմնական գյուղմթերքներն են՝կաթ, միս, բուրդ:

Համայնքի տարածքում 2016թվականին պետության կողմից ոչ մի ծրագիր չի իրականացվել:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԽՈՉԸՆԴՈՏՆԵՐ և ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Գործարար միջավայրի բարելավման և ձեռնարկատիրության խթանման հիմնական խոչընդոտներն են ֆինանսների բացակայությունը ,իրացման շուկայում արտադրանքի անմրցունակ լինելը և իրացման դժվարությունները:

2) ակտիվ մշակութային և մարզական կյանքի կազմակերպումը՝երիտասարդության ներգրավմամբ, խնդրի խոչընդոտներից են սպորտդահլիճի ,մշակույթի տան բացակայությունը:

3 ) Համայնքի բնակչության սոցիալական պաշտպանությունը բարելավելու համար խոչընդոտ է համարվում ֆինանսական միջոցների բացակայությունը:

4)համայնքում բնակարանային շինարարության խթանման խոչընդոտ է համարվում ֆինանսական միջոցների բացակայությունը:

5)համայնքի բնակավայրերի կառուցապատումը, բարեկարգումը և կանաչապատումը, ֆինան սական միջոցների բացակայությունը:

6) ներհամայնքային ճանապարհների պահպանման առումով կան որոշակի ֆինանսական դժվարություններ:

Գյուղատնտեսական աշխատանքների կազմակերպման համար տեխնիկայի պակասը, գյուղտեխնիկայի բարձր տոկոս կազմող մաշվածությունը, ժամամանակակից տեխնիկայի և տեխնոլոգիաների բացակայությունը, բեռնատարների ոչ սարքին վիճակը;

2016թվականին հողի հարկի, գույքահարկի և սեփական եկամուտների հավաքագրումը կատարվել է 100%-ով:

Համայնքում ծնելիությունը խրախուսելու համար յուրաքանչյուր ծնված երեխայի ընտանիքին հատկացվել է 40000 դրամ:

Համայնքում մահացած բնակչի ընտանիքին հատկացվել է 50000 դրամ:

Արցախյան պատերազմի և հայրենիքի սահմանները պաշտպանողներին ևս ցուցաբերվել է

նյութական օգնություն՝յուրաքանչյուրին միանվագ հատկացվել է 25000 դրամ:

2016թվականին համայնքում արձանագրվել է 13 ծնունդ, 12 մահ:Դա վատ ցուցանիշ է, քանի որ մահն ու ծնունդը համարյա նույնն է, այսինքն գյուղը ծերանում է:Դրա հիմնական պատճառը աշխատատեղերի բացակայությունն է, սոցիալական վատ վիճակը, որի հետևանքով երիտասարդները կամ չեն ամուսնանում կամ արտագաղթում են:

2017թվականին նախատեսվում է կրկին ֆինանսական օգնություն ցուցաբերել սոցիալապես անապահով ընտանիքներին:Կշարունակվի բազմազավակությանը և և նոր ծնված երեխաների ընտանիքներին ֆինանսական աջակցությունը՝ նպատակ հետապնդելով խթանելու ծնելության ցածր մակարդակը:Կշարունակվի պարբերական և հաստատուն աղբահանության իրականացու

Այժմ 2016թվականին իրականացված աշխատանքների մասին՝

2016 թվականին համայնքում իրականացվել են հետևյալ աշխատանքները՝

Սարից իջնող «Աղբյուրի ակ» կոչվող տարածքում 40մ ջրի խողովակաշար փոխվել և քլորացվել է, որի արդյուքում բնակչությունը բացի կենրոնական ջրամատակարարումից օգտվում է նաև 2-րդ ջրագծից:

Համայնքի մանկապարտեզի համար ձեռք է բերվել գույք և խաղալիքներ:

Ակտիվորեն համագործակցել ենք «Վորլդ Վիժն» հասարակական կազմակերպության հետ,որը և սոցիալական աջակցություն է ցուցաբերել գյուղի սոցիալապես անապահով երեխաների ընտանիքներին:

Պարբերաբար մաքրվել է դեպի հարևան Յաղդան տանող ճանապարհի կողքի ջրատարը:

Հաճախակի մաքրվել է նաև կենտրոնական փողոցի երկարությամբ անցնող ջրատարները, մեր անձնական միջոցներից ծախսելով 250000 դրամ:

Համայնքի բյուջեից 100000 դրամով ձեռք ենք բերել խնայողական լամպեր՝ գիշերային լուսավորության համար:

2016թվականին 250000 դրամով համայնքի բյուջից ձեռք է բերվել պրոպան գազ, որով լիցքավորվել են հակակարկտակայանները:Արդյունքը՝2016թվականի բնակչության ստացած անկորուստ բերքն էր:

Սեփական միջոցներով 2016թվականին մասնակի վերանորոգվել է ջրագծի մի հատված:

Որոշակի վերանորոգվել է դեպի խոտհարքներ և արոտավայրեր ճանապարհները:

## ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼ- ՏՆՏԵՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ

Ընդհանուր եկամուտների մեջ համայնքի սեփական եկամուտների բաժինը՝ 24,2%, է:

Եկամուտներ՝ 26185,3 հազ.դրամ,

2016թվականին հողի հարկի հավաքագրումը կազմել է 3932,856 դրամ

գույքահարկ փոխադրամիջոց՝ 1772,1 հազ.դրամ

գույքահարկ շենք 6,836 հազ.դրամ,

թույտվության վճար՝

որից

շինություն՝15,0 հազ. դրամ,

ոգելից խմիչքի՝48,0 հազ.դրամ,

դոտացիա՝ 19648,3 հազ.դրամ,

հողի վարձավճար՝ 508,01 հազ.դրամ

այլ եկամուտ՝ 10,0 հազ.դրամ,

Ծախսեր՝

Վեկտոր պլյուս՝ 28.800 հազ.դրամ,

աղբահանություն՝ 480.0 հազ.դրամ,

փողոցային լուսավորություն՝ 100,0 հազ.դրամ,

քաղաքական կուսակցություններ՝ 30,0 հազ.դրամ,

մանկապարտեզ՝ 5435,0 հազ.դրամ,

ուսման վճար՝ 693,0 հազ.դրամ,

հարազատին կորցրած ՝ 500,0 հազ.դրամ,

ծնունդ՝ 400,0 հազ.դրամ,

համերգի գումար՝ 30,0 հազ.դրամ

սոց.օգնություն՝ 2350,0 հազ.դրամ,

աշխատավարձ՝ 14112,0 հազ.դրամ,

կապ՝ 200,0 հազ.դրամ,

գործ. 19,4 հազ.դրամ,

համակարգչային ծառայ. 100,800 հազ.դրամ,

թերթ ՝ 16,0 հազ.դրամ,

մասնագիտական ծառ(կադաստր) 130,0 հազ.դրամ,

համակարգիչ 41,0 հազ.դրամ,

պրինտեր քարտրիջի լիցքավորում

գրենական՝ 50,0 հազ.դրամ,

պարտադիր վճար՝ 2,0 հազ.դրամ,

պրոպան գազի լիցքավորում /կարկատակայանների համար/ 455,300 հազ.դրամ,

բերքի տոն ,մարաթոն՝ 60,0 հազ.դրամ,

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԱԳԱՐԱԿ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի
Ագարակ համայնք, գ.Ագարակ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

« 24 » փետրվարի 2017 թվականի N 4- Ա

ՀԱՄԱՅՆՔԻ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ԵԿԵՂԵՑՈՒՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ

ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հաշվի առնելով ՀՀ Լոռու մարզպետի՝ 14.03.2016թվականի թիվ 101/111.4/1210-16 գրությունը, ի կատարումն ՀՀ Կառավարության աշխատակազմի ղեկավարի՝ 19.09.2006թ. թիվ 035-60 հանձնարարականը , Ագարակ համայնքի ավագանին որոշում է՝

Համայնքի եկեղեցին իր ամբողջ տարածքով՝ 0,17809 հա, անհատույց սեփականության իրավունքով հանձնել Հայաստանյաց Առաքելական եկեղեցուն:

Եկեղեցու հետ անհատույց փոխանցել նաև ներառական տարածքը՝ 66,21 ք.մ:

| | | կողմ | դեմ | ձեռնպահ |
|---|---|---|---|---|
| Ալիխանյան | Արթուր | | | |
| Բարխուդարյան | Ռադիկ | | | |
| Չատինյան | Կարեն | | | |
| Չորանյան | Արթուր | | | |
| Մելիքջանյան | Ռուդիկ | | | |

Համայնքի ղեկավար՝ Ռ.Բարխուդարյան